ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N 659-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N 659-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «Մանկապատանեկան սպորտի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 1214-Ա որոշման հավելված N 5-ի 2-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 4-ի «Հաշմանդամ մանուկների ու պատանիների անընդմեջ վերականգնման համակարգում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքների կազմակերպման, մեթոդաբանական ու բժշկական աջակցության կարգը սահմանելու մասին» N 659-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

- Որոշման և Որոշման հավելվածի վերնագրերում, ինչպես նաև Որոշման և Որոշման հավելվածի ամբողջ տեքստում «հաշմանդամ» բառը փոխարինել «հաշմանդամություն ունեցող» բառերով.

2. Որոշման հավելվածի.

1) 1-ին կետից «և սահմանափակ կարողություններ ունեցող» բառերը հանել.

2) 3 –րդ կետից «Ֆիզիկական արատներ ունեցող կամ հաշմանդամ երեխաների համար առանձին ուսումնամարզական պարապմունքների իրականացման կարգը սահմանելու մասին» բառերը հանել.

3) 4-րդ կետում «հանրակրթական դպրոցներում» բառերը փոխարինել «հանրակրթական ուսումնական հաստատություններում» բառերով.

4) 14-րդ կետում «հաշմանդամ երեխաների ֆիզկուլտուրայի պետական ավարտական քննությունների կարգն ու նորմատիվները» բառերը փոխարինել «հաշմանդամություն ունեցող երեխաների «ֆիզկուլտուրա» առարկայի վերջնարդյունքի գնահատման չափորոշիչները» բառերով, իսկ «հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության ոլորտում պետական լիազոր մարմինը» բառերը փոխարինել «հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: